

ԲԵՌՆԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

1886թ. սեպտեմբերի 9

Լրացված է Փարիզում 1896թ. մայիսի 4ին, վերանայված է Բեռլինում 1908թ. նոյեմբերի 13ին, լրացված է Բեռնում 1914թ. մարտի 20ին եւ վերանայված է Հռոմում՝ 1928թ. հունիսի 2ին, Բրյուսելում՝ 1948թ. հունիսի 26ին, Ստոկհոլմում՝ 1967թ. հուլիսի 14ին, Փարիզում՝ 1971թ. հուլիսի 24ին. փոփոխված է 1979թ. սեպտեմբերի 28ին:

Միության անդամ երկրները, ոգևորված ցանկությամբ՝ հնարավորին չափ արդյունավետ եւ միասնական ձեռով պահպանելու հեղինակների իրավունքները նրանց գրական եւ գեղարվեստական երկերի նկատմամբ,

Ընդունելով Կոնվենցիան վերանայելու ուղղությամբ 1967թ. Ստոկհոլմում կայացած Կոնֆերանսի աշխատանքների նշանակությունը,

Որոշեցին վերանայել Ստոկհոլմի Կոնֆերանսի կողմից ընդունված Ակտը, անփոփոխ թողնելով 1ից 20 եւ 22ից 26 հոդվածները:

Դրան համապատասխան ներքոստորագրյալ Լիագորները, ներկայացնելով իրենց լիազորությունները պատշաճ եւ լրիվ կարգով, համաձայնվեցին ստորեւ շարադրվածի հետ.

Հոդված 1.

(Միության ստեղծումը)

Այն երկրները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ստեղծում են Միություն՝ պահպանելու գրական եւ գեղարվեստական երկերի նկատմամբ հեղինակների իրավունքները:

Հոդված 2.

(Պահպանվող երկեր. 1.«Գրական եւ գեղարվեստական երկեր». 2. Ամրագրման հնարավոր պահանջներ. 3.Ածանցյալ երկեր. 4.Պաշտոնական տեքստեր. 5.Ժողովածուներ. 6. Պահպանությունից օգտվող անձի պահպանության մասին պարտավորություններ. 7.Կիրառական արվեստի երկեր եւ արդյունաբերական նմուշներ. 8.Նորություններ)

1. «Գրական եւ գեղարվեստական երկեր» հասկացությունն ընդգրկում է բոլոր երկերը գրականության, գիտության եւ արվեստի բնագավառում, ինչպիսի միջոցներով եւ ինչպիսի ձեռով որ արտահայտված լինեն, ինչպես՝ գրքեր, բրոշյուրներ եւ այլ գրավոր երկեր, դասախոսություններ, դիմումներ, քարտզներ եւ այլ նմանատիպ երկեր, դրամատիկական եւ երաժշտադրամատիկական երկեր, պարարվեստի երկեր ու մնջախաղ, երաժշտական երկեր տեքստով եւ առանց տեքստի, կինեմատոգրաֆիայի երկեր, որոնց հավասարեցվում են համանման միջոցներով արտահայտված

* Տեքստն առավել մատչելի դարձնելու նպատակով հոդվածներին ավելացվել են համառոտ մեկնաբանություններ, որոնք նախնական փաստաթղթում չեն եղել:

երկերը, նկարները, կերպարվեստի, ճարտարապետության, քանդակագործության, գրաֆիկայի եւ լիտոգրաֆիայի, լուսանկարչական երկերը, որոնց հավասարեցվում են համանման միջոցներով արտահայտված երկերը, կիրառական արվեստի երկերը, պատկերագարդումները, աշխարհագրական քարտեզները, պլանները, էսքիզները, պլաստիկ երկերը, որոնք վերաբերում են աշխարհագրությանը, տեղագրությանը, ճարտարապետությանը կամ գիտությանը:

2. Սակայն Միության անդամ երկրների օրենսդրության իրավասությունն է նշել, որ գրական եւ գեղարվեստական երկերը կամ նման դասակարգման որոշ երկեր ենթակա չեն պահպանման, եթե արտահայտված չեն այս կամ այն նյութական ձևով:

3. Թարգմանությունները, հարմարեցումները (ադապտացիա), երաժշտական վերադաշնակումներն ու գրական եւ գեղարվեստական երկերի այլ փոփոխությունները պահպանվում են բնագիր երկերին հավասար, առանց վնասելու բնագիր երկի հեղինակի իրավունքներին:

4. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է որոշել այն պահպանությունը, որը նախատեսվում է օրենսդրական, վարչական եւ դատական բնույթի պաշտոնական տեքստերի եւ դրանց պաշտոնական թարգմանությունների համար:

5. Գրական եւ գեղարվեստական երկերի ժողովածուները, օրինակ՝ հանրագիտարաններն ու անթոլոգիաները, որոնց նյութերի ընտրությունն ու տեղադրումը իրենից ներկայացնում է ստեղծագործական աշխատանքի արդյունք, պահպանվում են որպես այդպիսին, առանց վնասելու ժողովածուի մաս կազմող յուրաքանչյուր երկի հեղինակի իրավունքներին:

6. Սույն հոդվածում նշված երկերը պահպանվում են Միության անդամ բոլոր երկրներում: Այդ պահպանությունն իրականացվում է ի օգուտ հեղինակի եւ նրա իրավահաջորդների:

7. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 7 (4) հոդվածի դրույթները, որոշել իրենց օրենքների կիրարկման աստիճանը կիրառական արվեստի երկերի ու արդյունաբերական նախշերի ու նմուշների նկատմամբ, ինչպես նաեւ այդպիսի երկերի, նախշերի եւ նմուշների պահպանության պայմանները: Այն երկերի նկատմամբ, որոնք պահպանվում են երկի մայր երկրում (երկի ծագման երկիր) բացառապես որպես նախշեր ու նմուշներ, Միության անդամ այլ երկրներում կարող է պահանջվել միայն այդ երկրում նախշերի ու նմուշների համար նախատեսված հատուկ պահպանություն, սակայն, եթե տվյալ երկրում այդպիսի հատուկ պահպանություն չի նախատեսված, այդ երկերը պահպանվում են որպես գեղարվեստական երկեր:

8. Սույն Կոնվենցիայով նախատեսված պահպանությունը չի տարածվում օրվա նորությունների կամ զանազան իրադարձությունների մասին լրատվական տեղեկատվության բնույթ կրող հաղորդումների վրա:

Հոդված 2. bis

(Որոշակի երկերի պահպանության հնարավոր սահմանափակումներ. որոշակի ելույթներ. դասախոսությունների ու դիմումների որոշակի օգտագործում: Այդպիսի երկերի ժողովածուներ նախապատրաստելու իրավունքը)

1. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է ամբողջովին կամ մասամբ հանել նախորդ հոդվածով սահմանված պահպանությունից քաղաքական ելույթներն ու դատավարության ընթացքում արտասանված ճառերը:

2. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է նաեւ պայմաններ սահմանել, համաձայն որոնց դասախոսությունները, ելույթներն ու այլ հրապարակայնորեն արտասանված նույնատիպ երկերը կարող են վերարտադրվել մամուլում, եթե տրվել, հաղորդվել լարերով ի

գիտություն համընդհանուրի եւ սույն Կոնվենցիայի 11 bis (1) հոդվածով նախատեսված հրապարակային հաղորդումների առարկա կազմել, երբ այդպիսի օգտագործումն արդարացվում է տեղեկատվական նպատակով:

3. Բայց եւ այնպէս հեղինակն օգտվում է բացառիկ իրավունքից՝ նախապատրաստելու իր՝ նախորդ կետերում հիշատակված երկերի ժողովածու:

Հոդված 3.

(Պահպանություն նախատեսելու համար չափանիշերը. 1. Հեղինակի քաղաքացիությունը, երկի լույս ընծայման վայրը. 2. Հեղինակի բնակավայրը. 3. «Լույս տեսած» երկեր. 4. «Միաժամանակ լույս տեսած» երկեր)

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված պահպանությունը կիրառվում է.

ա) հեղինակների նկատմամբ, ովքեր Միության անդամ որեւէ երկրի քաղաքացի են, եւ նրանց՝ ինչպէս լույս տեսած, այնպէս էլ լույս չտեսած երկերի նկատմամբ.

բ) հեղինակների նկատմամբ, ովքեր Միության անդամ որեւէ երկրի քաղաքացի չեն, եւ նրանց երկերի նկատմամբ, որոնք առաջին անգամ լույս են տեսել այդ երկրներից մեկում, կամ՝ Միության անդամ երկրում եւ Միության անդամ չհանդիսացող երկրում միաժամանակ:

2. Հեղինակները, ովքեր Միության անդամ երկրի քաղաքացիներ չեն, բայց ունեն իրենց մշտական բնակավայրը այդպիսի երկրներից մեկում, հավասարեցվում են այդ երկրի քաղաքացիներին՝ սույն Կոնվենցիայի նպատակներով:

3. «Լույս տեսած երկեր»ի տակ պետք է հասկանալ այն երկերը, որոնք լույս են տեսել հեղինակների համաձայնությամբ անկախ օրինակների պատրաստման եղանակից, պայմանով, եթե այդ օրինակները շրջանառության մեջ են թողնվել հասարակության մտավոր պահանջները բավարարող քանակով՝ ուշադրություն դարձնելով երկի բնույթին: Լույս տեսնել չի համարվում դրամատիկական, երաժշտադրամատիկական կամ կինեմատոգրաֆիական երկի ներկայացումը, երաժշտական երկի կատարումը, գրական երկի հրապարակայնորեն ընթերցումը, գրական կամ գեղարվեստական երկերի հաղորդումը եթերով կամ լարերով, արվեստի երկերի ցուցադրումն ու ճարտարապետական երկերի կառույցները:

4. Երկը համարվում է միաժամանակ մի քանի երկրում լույս տեսած, եթե այն լույս է տեսել երկու կամ ավելի երկրներում երկի առաջին լույս ընծայումից հետո 30 օրվա ընթացքում:

Հոդված 4.

(Կինեմատոգրաֆիական, ճարտարապետական եւ որոշ գեղարվեստական երկերի նկատմամբ պահպանության նախատեսվող չափանիշերը)

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված պահպանությունը կիրառվում է, եթե անգամ երրորդ հոդվածով նախատեսված պայմանները չեն կատարվի.

ա) կինեմատոգրաֆիական երկերի, որոնց արտադրողը Միության անդամ երկրներից մեկում ունի իր նստավայրը կամ մշտական բնակավայրը, հեղինակների նկատմամբ.

բ) Միության անդամ որեւէ երկրում կառուցված ճարտարապետական երկերի կամ Միության անդամ որեւէ երկրում գտնվող այլ շինության կամ շենքի մաս հանդիսացող գեղարվեստական երկերի հեղինակների նկատմամբ:

Հոդված 5.

*(Երաշխավորված իրավունքներ. 1 եւ 2. Մայր երկրից դուրս.
3. Մայր երկրում. 4. «Մայր երկիրը»)*

1. Այն երկերի նկատմամբ, որոնց համար հեղինակներին պահպանություն է նախատեսվում սույն Կոնվենցիայի ուժով, Միության անդամ երկրներում, բացի երկի մայր երկրից, հեղինակներն օգտվում են այն իրավունքներից, որոնք նախատեսված են ներկայում կամ կնախատեսվեն հետագայում՝ այդ երկրների համապատասխան օրենքներով, իրենց քաղաքացիներին, ինչպես նաև սույն Կոնվենցիայով նախատեսվող իրավունքներից:

2. Այդ իրավունքներից օգտվելը եւ դրանց իրագործումը կապված չեն որեւէ ձեւականությունների կատարման հետ. այդպիսի օգտվելն ու իրականացումը կախված չեն երկի մայր երկրում պահպանության գոյությունից: Հետեւաբար, սույն Կոնվենցիայով սահմանված դրույթներից բացի, պահպանության ծավալը, ինչպես նաև պաշտպանության միջոցները, որոնք ապահովում են հեղինակի իրավունքների պաշտպանությունը, կարգավորվում են բացառապես այն երկրի օրենսդրությամբ, որտեղ պահանջվում է պահպանությունը:

3. Մայր երկրում պահպանությունը կարգավորվում է ներքին օրենսդրությամբ: Սակայն, եթե հեղինակը երկի մայր երկրի քաղաքացի չի հանդիսանում, որի համար նրան պահպանություն է նախատեսվում սույն Կոնվենցիայի ուժով, օգտվում է այդ երկրում նույնպիսի իրավունքներից, ինչպիսին այդ երկրի քաղաքացի հանդիսացող հեղինակները:

4. Երկի մայր երկիր է համարվում.

ա) երկի համար, որն առաջին անգամ լույս է տեսել Միության անդամ որեւէ երկրում այդ երկիրը: Այն երկի համար, որը լույս է տեսել միաժամանակ Միության անդամ մի քանի երկրներում, որոնք նախատեսում են պահպանության տարբեր ժամկետներ այն երկիրը, որի օրենսդրությունը սահմանում է պահպանության ամենակարճ ժամկետը.

բ) երկերի համար, որոնք լույս են տեսել միաժամանակ Միության անդամ չհամարվող որեւէ երկրում եւ Միության անդամ որեւէ երկրում վերջին երկիրը.

գ) լույս չընծայված երկերի համար կամ առաջին անգամ Միության կազմի մեջ չմտնող երկրում լույս ընծայված երկերի համար, առանց Միության անդամ որեւէ երկրում միաժամանակյա լույս ընծայման այն երկիրը, որի քաղաքացին է հեղինակը, պայմանով, որ

կինեմատոգրաֆիական երկերի նկատմամբ, որոնց արտադրողն ունի իր նստավայրը կամ մշտական բնակավայրը Միության անդամ որեւէ երկրում մայր երկիր է հանդիսանում այդ երկիրը եւ Միության անդամ որեւէ երկրում կառուցված ճարտարապետական երկերի կամ այլ գեղարվեստական երկերի նկատմամբ, որոնք հանդիսանում են Միության անդամ որեւէ երկրում գտնվող շենքի կամ այլ շինության մաս մայր երկիր է հանդիսանում այդ երկիրը:

Հոդված 6.

(Միության կազմի մեջ չմտնող որոշ երկրների քաղաքացիների որոշ երկերի նկատմամբ պահպանության հնարավոր սահմանափակում. 1. Առաջին լույս ընծայման երկրում եւ այլ երկրներում. 2. Հետադարձ ուժի բացակայություն. 3. Տեղեկացում (ծանուցում))

1. Եթե Միության կազմի մեջ չմտնող ցանկացած երկիր չի ապահովում բավարար պահպանություն երկերի հեղինակներին, ովքեր Միության անդամ որեւէ երկրի քաղաքացի են, այդ վերջին երկիրը կարող է սահմանափակել երկերի հեղինակներին նախատեսվող պահպանությունը, ովքեր այդ

երկերի առաջին լույս ընծայման ժամանակ հանդիսանում են այլ երկրի քաղաքացի եւ ուլքեր չունեն իրենց մշտական բնակավայրը Միության անդամ որեւէ երկրում: Եթե երկիրը, որտեղ երկը լույս է տեսել առաջին անգամ, կօգտվի այդ իրավունքից, Միության անդամ մյուս երկրները պարտավոր չեն այդպիսի հատուկ ռեժիմի ենթարկվող երկերի նկատմամբ ապահովել ավելի լայնածավալ պահպանություն, քան այն, որը նախատեսված է դրանց առաջին լույս ընծայման երկրում:

2. Նախորդ կետով սահմանված ոչ մի սահմանափակում չի վնասում այն իրավունքները, որ ձեռք է բերել հեղինակը Միության անդամ որեւէ երկրում լույս տեսած երկի նկատմամբ՝ մինչեւ նման սահմանափակման գործողության մեջ դրվելը:

3. Միության անդամ երկրները, որոնք սույն հոդվածի համապատասխան, սահմանափակում են հեղինակային իրավունքի պահպանությունը, տեղեկացնում են այդ մասին Մտավոր Մեփականության Համաշխարհային Կազմակերպության Գլխավոր Տնօրենին (հետագայում՝ Գլխավոր Տնօրեն) գրավոր հայտարարությամբ, նշելով երկիրը, որի նկատմամբ սահմանափակվում է պահպանությունը, ինչպես նաեւ այն սահմանափակումները, որոնց ենթարկվում են այդ երկրների հեղինակքաղաքացիների իրավունքները: Գլխավոր Տնօրենն անմիջապես հաղորդում է այդ հայտարարության մասին Միության անդամ մյուս երկրներին:

Հոդված 6 bis

(Ոչ գույքային իրավունքներ. 1. Հեղինակության ճանաչում պահանջելը. որոշակի փոփոխությունների եւ իրավունքները խախտող այլ գործողությունների դեմ առարկումը. 2. Հեղինակի մահից հետո. 3. Պաշտպանության միջոցները)

1. Անկախ հեղինակի գույքային իրավունքներից, եւ նույնիսկ այդ իրավունքները զիջելուց հետո էլ, հեղինակն իրավասու է պահանջել երկի նկատմամբ իր հեղինակության ճանաչումը եւ առարկել (արգելել) իր երկի ցանկացած խեղաթյուրման, աղճատման, աղավաղման կամ փոփոխման, ինչպես նաեւ իր պատվին կամ հեղինակությանը վնասող ոտնձգությունների դեմ:

2. Նախորդ կետով սահմանված հեղինակի իրավունքներն ուժի մեջ են մնում նրա մահից հետո առնվազն մինչեւ գույքային իրավունքների ավարտը եւ իրականացվում են այն անձանց կամ հաստատությունների կողմից, որոնք լիազորված են պահպանություն պահանջվող երկրի օրենսդրությամբ: Այն երկրները, որոնց օրենսդրությունը սույն Ակտի վավերացման կամ դրան միանալու պահին չեն բովանդակում հեղինակի մահից հետո նախորդ կետում թվարկված նրա բոլոր իրավունքների պահպանությունն ապահովող դրույթներ, կարող են նախատեսել, որ այդ իրավունքների մի մասը դադարում է գործել հեղինակի մահից հետո:

3. Սույն հոդվածով նախատեսված իրավունքների ապահովման համար պաշտպանության միջոցները կարգավորվում են այն երկրի օրենսդրությամբ, որտեղ պահանջվում է պահպանությունը:

Հոդված 7

(Պահպանության ժամկետը. 1. Ընդհանուր դրույթներ, 2. Կինեմատոգրաֆիական երկերի համար, 3. Կեղծանունով կամ անանուն լույս տեսած երկերի համար. 4. Լուսանկարչական եւ կիրառական արվեստի երկերի համար. 5. Հաշվարկման ժամկետը. 6. Ավելի երկար ժամկետներ. 7. Ավելի կարճ ժամկետներ. 8. Կիրառվող օրենսդրությունը. ժամկետների «համեմատությունը»)

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված պահպանության ժամկետն ընդգրկում է հեղինակի ամբողջ կյանքի ընթացքը եւ 50 տարի՝ նրա մահից հետո:

2. Սակայն կինեմատոգրաֆիական երկերի համար Միության անդամ երկրներն իրավասու են նախատեսել, որ պահպանության ժամկետն ավարտվում է 50 տարի անց այն պահից, երբ երկը հեղինակի համաձայնությամբ մատչելի է դարձել հանրությանը կամ, եթե երկի ստեղծման պահից 50 տարվա ընթացքում երկը մատչելի չի դառնում հանրությանը, ապա պահպանության ժամկետը լրանում է երկի ստեղծումից 50 տարի հետո:

3. Երկերի համար, որոնք լույս են տեսել անանուն կամ կեղծանունով, սույն Կոնվենցիայով նախատեսվող պահպանության ժամկետը լրանում է 50 տարի անց՝ երկն օրինաչափ կերպով հանրությանը մատչելի դառնալուց հետո: Սակայն, եթե կեղծանունով հանդես եկող հեղինակի անձը կասկած չի հարուցում, պահպանության ժամկետ է համարվում (1) կետով նախատեսված ժամկետը: Եթե կեղծանունով կամ անանուն լույս տեսած երկի հեղինակը բացահայտում է իր անձը վերոնշյալ ժամկետի ընթացքում, ապա կիրառվում է (1) կետով նախատեսված պահպանության ժամկետը: Միության անդամ երկրները պարտավոր չեն պահպանել անանուն կամ կեղծանունով լույս ընծայվող երկերը, որոնց նկատմամբ առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ դրանց հեղինակի մահից հետո անցել է 50 տարի:

4. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է որոշել լուսանկարչական եւ կիրառական արվեստի երկերի պահպանության ժամկետը, որոնք պահպանվում են որպես գեղարվեստական երկեր, սակայն այդ ժամկետը չի կարող պակաս լինել 25 տարուց՝ սկսած երկի ստեղծման պահից:

5. Հեղինակի մահից հետո նախատեսվող պահպանության ժամկետը եւ (2), (3), (4) կետերով նախատեսված ժամկետները հաշվվում են հեղինակի մահվան օրից կամ իրադարձությունը տեղի ունենալու օրից, բայց միշտ սկսվում է մահվանը կամ իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի 1ից:

6. Միության անդամ երկրներն իրավասու են սահմանել նախորդ կետերով նախատեսված ժամկետները չգերազանցող պահպանության ժամկետներ:

7. Միության անդամ երկրները, որոնք կապված են սույն Կոնվենցիայի Հոդվածի ակտով եւ սույն Ակտը ստորագրելու պահին իրենց ազգային գործող օրենսդրությամբ սահմանել են պահպանության ավելի կարճ ժամկետներ, քան նախատեսված են նախորդ կետերով, իրավասու են պահպանել այդ ժամկետները սույն Ակտին միանալիս կամ դրա վավերացման դեպքում:

8. Ցանկացած դեպքում ժամկետը որոշվում է այն երկրի օրենսդրությամբ, որտեղ պահանջվում է պահպանությունը, սակայն եթե այդ երկրի օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված, այդ ժամկետը չի կարող ավելի տեւական լինել, քան այն, որ սահմանվել է երկի մայր երկրում:

Հոդված 7 bis

(Համահեղինակությամբ ստեղծված երկերի պահպանության ժամկետները)

Նախորդ հոդվածների դրույթները կիրառվում են նաեւ համահեղինակությամբ ստեղծված երկերի նկատմամբ պայմանով, որ հեղինակի մահից հետո սահմանվող ժամկետները հաշվվում են համահեղինակներից վերջինի մահվան տարուց:

Հոդված 8

(Թարգմանության իրավունք)

Սույն Կոնվենցիայով պահպանվող գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակները բնօրինակ երկի նկատմամբ իրենց իրավունքների գործողության ամբողջ ընթացքում բացառիկ իրավունք ունեն թարգմանել եւ թույլատրել իրենց երկերի թարգմանությունը:

Հոդված 9

(Վերարտադրության իրավունք. 1.Ընդհանուր դրույթներ. 2.Հնարավոր բացառություններ. 3.Ձայնային եւ պատկերային գրանցումներ (ձայնատեսագրություններ)

1.Սույն Կոնվենցիայով պահպանվող գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակները բացառիկ իրավունք ունեն թույլատրել այդ երկերի վերարտադրությունը ցանկացած միջոցներով եւ ցանկացած ձևով:

2. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է թույլատրել այդպիսի երկերի վերարտադրությունը որոշակի հատուկ դեպքերում պայմանով, որ այդպիսի վերարտադրությունը չի վնասի երկի նորմալ օգտագործմանը եւ անհիմն կերպով չի ոտնահարի հեղինակի օրինական շահերը:

3. Ցանկացած ձայնային կամ պատկերային գրանցում համարվում է վերարտադրություն սույն Կոնվենցիայի նպատակների համար:

Հոդված 10

(Երկի ազատ օգտագործման որոշ դեպքեր. 1.Մեջբերումներ. 2.Ուսուցման նպատակով պատկերագրություններ. հեղինակի եւ սկզբնաղբյուրի նշում)

1. Թույլատրվում է մեջբերումներ (քաղվածքներ) երկից, որն արդեն օրինաչափ կերպով մատչելի է դարձել հանրությանը, բարի սովորույթները պահպանելու պայմանով եւ նպատակն արդարացնող ծավալով, ներառյալ թերթերի ու ամսագրերի հոդվածներից մեջբերումներ՝ մամուլի տեսության ձևով:

2. Միության անդամ երկրների օրենսդրությամբ եւ նրանց միջեւ կնքված կամ կնքվելիք հատուկ համաձայնագրերով կարող է թույլատրվել գրական կամ գեղարվեստական երկերի օգտագործում նպատակն արդարացնող ծավալով հրատարակություններում՝ որպես պատկերագրություններ, ռադիոհեռուստահաղորդումներում եւ ուսուցողական բնույթի ձայնային ու պատկերային գրանցումներում պայմանով, որ այդպիսի օգտագործումն իրականացվում է, պահպանելով բարի սովորույթները:

3. Սույն հոդվածի նախորդ կետերի համաձայն երկերի օգտագործման դեպքում նշվում է սկզբնաղբյուրն ու հեղինակի անունը, եթե այն նշված է այդ սկզբնաղբյուրում:

Հոդված 10 bis

(Երկերի ազատ օգտագործման հնարավոր լրացուցիչ դեպքեր. 1. Եթեր տրված որոշ հոդվածներ ու երկեր. 2. Առօրյա իրադարձությունների ընթացքում ցուցադրված կամ հրապարակված երկեր)

1. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է թույլատրել թերթերում ու ամսագրերում հրապարակված ընթացիկ տնտեսական, քաղաքական եւ կրոնական հարցերով հոդվածների կամ եթեր տրված նմանատիպ բնույթի երկերի վերարտադրությունը մամուլում, եթեր կամ հաղորդալարով հաղորդելը՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով այն դեպքերում, երբ այդպիսի վերարտադրության, եթեր կամ լարերով հաղորդելու իրավունքի համար նախապես պայմանավորվածություն ձեռք չի բերվել: Սակայն պետք է սկզբնաղբյուրը միշտ պարզորոշ նշվի. իրավական հետեւանքները այդ պարտականությունը չկատարելու դեպքում որոշվում են այն երկրի օրենսդրությամբ, որտեղ պահանջվում է պահպանությունը:

2. Միության անդամ երկրի օրենսդրության իրավասությունն է նաեւ որոշել այն պայմանները, որոնց համաձայն գրական եւ գեղարվեստական երկերը, որոնք ցուցադրված կամ հրապարակված են առօրյա իրադարձություններ~~ը~~ ընթացքում, կարող են տեղեկատվական նպատակն արդարացնող ծավալով վերարտադրվել կամ հանրությանը մատչելի դառնալ առօրյա իրադարձությունների տեսություններում՝ լուսանկարչության կամ կինեմատոգրաֆիայի միջոցներով, եթեր կամ լարերով հաղորդվել՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով:

Հոդված 11

(Դրամատիկական եւ երաժշտական երկերի նկատմամբ որոշ իրավունքներ. 1. Հրապարակային ներկայացում եւ հանրությանը տեղեկացնելու նպատակով ներկայացումը հաղորդելու իրավունք. 2. Թարգմանության առնչությամբ)

1. Դրամատիկական, երաժշտադրամատիկական եւ երաժշտական երկերի հեղինակներն օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրել.

i) իրենց երկերի հրապարակային ներկայացում եւ կատարում, ներառյալ ցանկացած միջոցներով ու եղանակով հրապարակային ներկայացում եւ կատարում.

ii) երկերի կատարումների եւ ներկայացումների ցանկացած միջոցներով հաղորդում՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով.

2. Այդպիսի իրավունքներ են վերապահվում նաեւ դրամատիկական կամ երաժշտադրամատիկական երկերի հեղինակներին՝ իրենց երկերի թարգմանությունների առնչությամբ, բնագիր երկի նկատմամբ նրանց իրավունքի ամբողջ գործողության ընթացքում:

Հոդված 11 bis

(Եթեր հաղորդումը եւ դրան առնչվող իրավունքները. 1. Եթեր հաղորդումը եւ անլար հաղորդումների այլ միջոցներ, եթեր տրված երկերի հրապարակային հաղորդում լարերով կամ եթեր կրկնվող հաղորդումներով, բարձրախոսի կամ նմանատիպ սարքերի օգնությամբ եթեր տրված երկի հրապարակային հաղորդում. 2. Հարկադիր թույլտվություններ (լիցենզիաներ), 3. Գրանցումներ, կարճաժամկետ օգտագործման գրանցումներ)

1. Գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակներն օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրել.

i) իրենց երկերի եթեր հաղորդումը կամ նշանների, ձայնի կամ պատկերների անլար հաղորդման ցանկացած այլ միջոցներով այդ երկերի հրապարակային հաղորդումը.

ii) Կրկնակի եթեր հաղորդվող երկի յուրաքանչյուր հրապարակային հաղորդում, լինի հաղորդագծով կամ կապի անլար միջոցներով, եթե այդպիսի հաղորդումն իրականացվում է ոչ թե սկզբնական, այլ ուրիշ կազմակերպության կողմից.

iii) Բարձրախոսի կամ նշաններ, ձայներ կամ պատկերներ հաղորդող ցանկացած այլ սարքի օգնությամբ եթեր տրված երկի հրապարակային կատարում.

2. Միության անդամ երկրների օրենսդրությամբ կարող են սահմանվել նախորդ կետով նախատեսված իրավունքներն իրագործելու պայմանները, սակայն այդ պայմանների գործողությունը խստորեն սահմանափակված կլինի այն երկրների տարածքով, որտեղ այդ պայմանները կորոշվեն: Այդ պայմանները ոչ մի դեպքում չեն կարող վնասել հեղինակի ոչ գույքային իրավունքներին եւ ոչ էլ, համաձայնության բացակայության դեպքում, իրավասու մարմնի կողմից սահմանված հեղինակի արդարացի վարձատրությունն ստանալու իրավունքին:

3. Սույն հոդվածի (1) կետով նախատեսված թույլտվությունը , քանի որ այլ բան չի սահմանված, չի ներառում եթեր հաղորդած երկը ձայն կամ պատկեր ամրագրող սարքերի օգնությամբ գրանցելու թույլտվությունը: Սակայն Միության անդամ երկրների օրենսդրությամբ կարող է սահմանվել ռադիոհաղորդող կազմակերպությունների սեփական միջոցներով կատարվող եւ իրենց իսկ հաղորդումների համար կարճաժամկետ օգտագործման գրանցումների կարգ /ռեժիմ/: Այդ օրենսդրությամբ կարող է թույլատրվել այդպիսի գրանցումները պաշտոնական արխիվներում պահելը, նկատի ունենալով դրանց բացառիկ վավերագրական բնույթը:

Հոդված 11 ter

(Գրական երկերի նկատմամբ որոշ իրավունքներ. 1. Հրապարակային ընթերցման եւ ընթերցումը հանրությանը տեղեկացնելու նպատակով հաղորդման իրավունք. 2. Թարգմանությունների վերաբերյալ)

1. Գրական երկերի հեղինակներն օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրել.

i) իրենց երկերի հրապարակային ընթերցումը, ներառյալ ցանկացած միջոցներով կամ եղանակով իրականացվող հրապարակային ընթերցում.

ii) իրենց երկերի ընթերցման ցանկացած միջոցներով հաղորդում՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով.

2. Նույնպիսի իրավունքներ են նախատեսվում նաեւ գրական երկերի հեղինակներին՝ իրենց երկերի թարգմանությունների վերաբերյալ, բնօրինակ երկի նկատմամբ նրանց իրավունքի ամբողջ գործողության ընթացքում:

Հոդված 12

(Վերամշակումների, վերադաշնակումների եւ այլ փոփոխությունների իրավունք)

Գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակներն օգտվում են բացառիկ իրավունքից թույլատրել իրենց երկերի վերամշակումներ, վերադաշնակումներ եւ այլ փոփոխություններ:

Հոդված 13

(Երաժշտական երկերի ու դրանց առնչվող ցանկացած տեքստերի գրանցման իրավունքի հնարավոր սահմանափակումներ. 1. Հարկադիր թույլտվություններ, 2. Անցման միջոցներ. 3. Առանց հեղինակի թույլտվության ներմուծված օրինակների նկատմամբ կալանք)

1. Միության անդամ ցանկացած երկիր բացառիկ իրավունքների վերաբերյալ իր համար կարող է սահմանել երաժշտական երկի հեղինակին եւ ցանկացած տեքստի հեղինակին, որն արդեն թույլատրել է իր երկի գրանցումը երաժշտական երկի հետ, նախատեսվող պայմաններ ու վերապահումներ՝ թույլատրելու երաժշտական երկի ձայնային գրանցում այդպիսի տեքստի հետ, եթե այդպիսին կա: Բայց այդպիսի պայմաններն ու վերապահումները կիրառվում են միայն դրանք սահմանող երկրում եւ ոչ մի դեպքում չեն կարող վնասել այդ հեղինակների արդարացի վարձատրություն ստանալու իրավունքներին, որը սահմանվում է իրավասու մարմնի կողմից՝ համաձայնագրի բացակայության դեպքում:

2. Երաժշտական երկերի գրանցումները, որոնք արվել են Միության անդամ որեւէ երկրում 1928թ. հունիսի 12ին Հռոմում եւ 1948թ. հունիսի 26ին Բրյուսելում ստորագրված Կոնվենցիայի 13(3) հոդվածի համաձայն, կարող են վերարտադրվել այդ երկրում առանց երաժշտական երկի հեղինակի թույլտվության 2 տարի՝ մինչեւ այդ երկրում սույն Ակտի գործողության մեջ մտնելու օրը:

3. Սույն հոդվածի (1) եւ (2) կետերի համաձայն արված գրանցումները եւ դրանց ներմուծումը առանց շահագրգիռ կողմի թույլտվության այն երկիր, որտեղ դրանք համարվում են անօրինական, ենթակա են կալանման:

Հոդված 14

(Կինեմատոգրաֆիական բեմադրություններ եւ դրանց առնչվող իրավունքներ.)

1. Կինեմատոգրաֆիական վերափոխում եւ վերարտադրություն, տարածում, հրապարակային ներկայացում եւ վերափոխված կամ վերարտադրված երկի հաղորդում լարերով՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով. 2. Կինեմատոգրաֆիական բեմադրությունների վերափոխում. 3. Հարկադիր թույլտվություններ չկիրառելը)

1. Գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակները բացառիկ իրավունք ունեն թույլատրել.
 - i) իրենց երկերի կինեմատոգրաֆիական վերափոխումն ու վերարտադրումը եւ փոփոխված կամ վերարտադրված երկի տարածումը.
 - ii) վերափոխված կամ վերարտադրված երկերի հրապարակային ներկայացումն ու կատարումը եւ դրանց հաղորդումը լարերով հանրությանը տեղեկացնելու նպատակով.
2. Գրական կամ գեղարվեստական երկերից ածանցված կինեմատոգրաֆիական բեմադրության վերափոխում ցանկացած այլ գեղարվեստական ձևով, անկախ դրա հեղինակի թույլտվությունից, պահանջում է նաեւ բնօրինակ երկի հեղինակի թույլտվությունը:
3. 13(1) հոդվածի դրույթները չեն կիրառվում:

Հոդված 14 bis

(Կինեմատոգրաֆիական երկերին վերաբերող հատուկ դրույթներ. 1. «Բնօրինակ» երկին հավասարեցնելը. 2. Իրավունքի տերեր. որոշակի անձանց, ովքեր ներդրում ունեն երկի ստեղծման գործում, մի շարք իրավունքների սահմանափակում. 3. Երկի ստեղծման գործում ներդրում ունեցող մի շարք այլ անձինք)

1. Առանց վնասելու ցանկացած երկի հեղինակային իրավունքները, որը կարող է վերափոխված լինել կամ վերարտադրված, կինեմատոգրաֆիական երկը ենթակա է պահպանման որպես բնօրինակ երկ: Կինեմատոգրաֆիական երկի հեղինակային իրավունքի տերն օգտվում է նույնպիսի իրավունքներից, ինչպիսիք ունի բնօրինակ երկի հեղինակը, ներառյալ նախորդ հոդվածում նախատեսվող իրավունքները:

2. ա) Այն երկրի օրենսդրության իրավասությունն է որոշել կինեմատոգրաֆիական երկի հեղինակային իրավունքի տիրոջ անձը, որտեղ պահանջվում է պահպանությունը:

բ) Սակայն Միության անդամ երկրներում, որոնց օրենսդրությունը կինեմատոգրաֆիական երկերի նկատմամբ հեղինակային իրավունքի տերերի թվում ընդգրկում է նաև այդ երկերի ստեղծման գործում ներդրում ունեցող հեղինակներին, այդ հեղինակները, եթե պարտավորվել են կատարել այդպիսի ներդրում, իրավասու չեն ցանկացած հատուկ կամ հակառակ պայմանի բացակայության դեպքում արգելել երկի վերարտադրումը, տարածումը, հրապարակային ներկայացումը կամ կատարումը, հաղորդումը լարերով՝ հանրությանը տեղեկացնելու նպատակով, հաղորդումը եթեր կամ ցանկացած այլ հրապարակային հաղորդումը, ինչպես նաև տիտրերում նշելը եւ կրկնօրինակելը:

գ) Այն հարցը, թե պետք է արդյոք վերոնշյալ պարտավորությունը, նախորդ (բ) կետը կիրառելու համար, արտահայտված լինի գրավոր համաձայնության ձևով կամ հավասարազոր գրավոր ակտով, որոշվում է այն երկրի օրենսդրությամբ, որտեղ կինեմատոգրաֆիական երկի արտադրողն ունի իր նստավայրը կամ մշտական բնակավայրը: Սակայն Միության անդամ, պահպանություն պահանջվող երկրի օրենսդրության իրավասությունն է որոշել, որ այդպիսի պարտավորությունը սահմանվի գրավոր համաձայնությամբ կամ հավասարազոր գրավոր ակտով: Այն երկրները, որոնք օգտվում են այդպիսի իրավունքից, գրավոր դիմումով տեղեկացնում են այդ մասին Գլխավոր Տնօրենին, որն էլ այն անմիջապես հաղորդում է Միության անդամ մյուս բոլոր երկրներին:

դ) «Հարկադիր կամ հատուկ պայման»ի տակ հասկացվում է ցանկացած սահմանափակող պայման, որն առնչվում է վերոնշյալ պարտավորությանը:

3. Եթե ազգային օրենսդրությամբ այլ բան չի նախատեսվում, վերոնշյալ (2) (բ) կետի դրույթները չեն կիրառվում սցենարների, երկխոսությունների ու կինեմատոգրաֆիական երկերի բեմադրության համար ստեղծված երաժշտական երկերի հեղինակների կամ բեմադրող ռեժիսորների նկատմամբ: Միության անդամ այն երկրները, որոնց օրենսդրությունը չի պարունակում բեմադրող ռեժիսորի նկատմամբ 2(բ) կետի կիրառումը նախատեսող դրույթներ, գրավոր դիմումով տեղեկացնում են այդ մասին Գլխավոր Տնօրենին, որն էլ այդ մասին անմիջապես հաղորդում է Միության անդամ մյուս բոլոր երկրներին:

Հոդված 14 ter

(Արվեստի երկերի ու բնօրինակի նկատմամբ «մասի մասնակցության իրավունք».

1. Վերավաճառքից մաս ունենալու իրավունք. 2. Օրենսդրության կիրառումը.

3. Ընթացակարգը)

1. Արվեստի երկերի բնօրինակների եւ գրողների ու կոմպոզիտորների ձեռագրերի բնօրինակների նկատմամբ հեղինակը, իսկ նրա մահից հետո անձինք կամ հաստատությունները, որոնք լիազորված են ազգային օրենսդրությամբ, օգտվում են հեղինակի կողմից կատարված երկի առաջին զիջումին հաջորդող յուրաքանչյուր վաճառքից մաս ունենալու անօտարելի իրավունքից:

2. Նախորդ կետով նախատեսված պահպանությունը կարող է պահանջվել Միության անդամ ցանկացած երկրում միայն, եթե այն երկրի օրենսդրությունը, որին պատկանում է հեղինակը,

թույլատրում է դա եւ այն ծավալով, որը թույլատրելի է պահպանություն պահանջվող երկրի օրենսդրությամբ:

3. Հավաքման կարգն ու գումարների չափը որոշվում է ազգային օրենսդրությամբ:

Հոդված 15

(Պահպանվող իրավունքի նկատմամբ պաշտպանության իրավունք. 1. Երբ հեղինակի անունը նշվում է, կամ երբ կեղծանունը հեղինակի անձի նկատմամբ կասկած չի հարուցում. 2. Կինեմատոգրաֆիական երկերի դեպքում. 3. Անանուն կամ կեղծանունով հրատարակված երկերի դեպքում. 4. Որոշ չհրատարակված երկերի դեպքում, որոնց հեղինակներն անհայտ են)

1. Որպեսզի սույն Կոնվենցիայով պահպանվող գրական եւ գեղարվեստական երկերի հեղինակը դիտվի որպես այդպիսին, հակառակն ապացույցների բացակայության դեպքում, եւ դրան համապատասխան թույլատրվի Միության անդամ երկրներում դատական հետապնդում հարուցել նմանակված օրինակների նկատմամբ, բավական է այն, որ հեղինակի անունը նշված լինի երկի վրա սովորական ձևով: Սույն կետը կիրառվում է, նույնիսկ եթե այդ անունը կեղծանուն է, եթե հեղինակի կողմից ընդունված կեղծանունը հեղինակի անձի նկատմամբ կասկած չի հարուցում:

2. Կինեմատոգրաֆիական երկի պատրաստող է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի անունը կամ անվանումը նշված է այդ երկի վրա սովորական ձևով՝ հակառակն ապացույցների բացակայության դեպքում:

3. Անանուն կան կեղծանունով լույս ընծայված երկերի նկատմամբ, բացի (1) կետում նշվածներից, հրատարակիչը, որի անունը նշված է երկի վրա, ճանաչվում է հեղինակի ներկայացուցիչ՝ հակառակն ապացույցների բացակայության դեպքում, եւ որպես այդպիսին իրավասու է պաշտպանել հեղինակի իրավունքներն ու ապահովել դրանց իրականացումը: Սույն կետի դրույթների գործունեությունը դադարում է, երբ հեղինակը բացահայտում է իր անձը եւ հայտարարում է երկի նկատմամբ իր հեղինակության մասին:

4. ա) Չհրատարակված երկերի համար, որոնց հեղինակներն անհայտ են, բայց որոնց վերաբերյալ կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ նրանք հանդիսանում են Միության անդամ երկրի քաղաքացի, այդ երկրի օրենսդրության իրավասությունն է նշանակել լիազորված մարմին, որը կներկայացնի այդ հեղինակին եւ լիազորված կլինի պաշտպանել նրա իրավունքներն ու ապահովել դրանց իրականացումը Միության անդամ երկրներում:

բ) Միության անդամ երկրները, որոնք այս դրույթին համապատասխան կատարում են նման նշանակում, տեղեկացնում են այդ մասին Գլխավոր Տնօրենին գրավոր դիմումով, որտեղ կպարունակվեն այդպիսի մարմնի նշանակման մասին լրիվ տեղեկություններ: Գլխավոր Տնօրենն անմիջապես հաղորդում է այդ դիմումը Միության անդամ մյուս բոլոր երկրներին:

Հոդված 16

(Նմանակված օրինակներ. 1. Կալանք. 2. Ներմուծման դեպքում կալանք. 3. Կիրառվող օրենսդրությունը)

1. Երկի նմանակված օրինակները ենթակա են կալանքի Միության անդամ ցանկացած երկրում, որտեղ այդ երկն իրավական պահպանություն ունի:

2. Նախորդ կետի դրույթները կիրառվում են նաեւ վերարտադրությունների նկատմամբ, որոնք կատարվել են այն երկրներում, որտեղ երկը չի պահպանվում կամ դադարել է պահպանվել:

3. Կալանք դրվում է յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 17

(Երկի ցուցադրման ու կատարման, տարածման հսկողության հնարավորությունը)

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կարող որևէ կերպ վնասել Միության անդամ յուրաքանչյուր երկրի կառավարության իրավունքը՝ թույլատրել, հսկել կամ արգելել օրենսդրական կամ վարչական կարգով ցանկացած երկի կամ բեմադրության տարածում, կատարում կամ ցուցադրումը, որոնց նկատմամբ իրավասու մարմինն անհրաժեշտ է գտնում իրականացնել այդ իրավունքը:

Հոդված 18

(Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին գոյություն ունեցող երկեր. 1. Պահպանվող, երբ պահպանությունը դեռ չի դադարել մայր երկրում. 2. Չպահպանվող, երբ պահպանությունն արդեն դադարել է պահպանություն պահանջվող երկրում. 3. Այդ սկզբունքների կիրառում. 4. Հատուկ դեպքեր)

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է այն բոլոր երկրների նկատմամբ, որոնք Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահին մայր երկրում դեռևս հանրության սեփականություն չեն դարձել պահպանության ժամկետն ավարտվելու հետևանքով:
2. Սակայն, եթե պահպանության ժամկետն ավարտվելու հետևանքով երկն արդեն դարձել է հանրության սեփականություն այն երկրում, որտեղ պահանջվում է պահպանությունը, երկն այլևս այդ երկրում ենթակա չէ պահպանության:
3. Նշված սկզբունքը կիրառվում է հատուկ կոնվենցիաների դրույթների համաձայն, որոնք կնքված են կամ կկնքվեն այդ նպատակով Միության անդամ երկրների միջև: Այդպիսի սկզբունքների բացակայության դեպքում համապատասխան երկրներից յուրաքանչյուրն իր համար սահմանում է այդ սկզբունքը կիրառելու պայմաններ:
4. Նախորդ դրույթները կիրառվում են նաև Միությանը նոր անդամակցությունների դեպքում եւ այն դեպքերում, երբ պահպանությունն ընդլայնվում է հոդված 7ը կիրառելու կարգով կամ կանխապայմաններից հրաժարվելու հետևանքով:

Հոդված 19

(Ավելի լայն պահպանություն, քան նախատեսված է Կոնվենցիայով)

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում ավելի լայն պահպանության պահանջին, որը կարող է նախատեսվել Միության անդամ այս կամ այն երկրի օրենսդրությամբ:

Հոդված 20

(Միության անդամ երկրների միջև հատուկ համաձայնագրեր)

Միության անդամ երկրների կառավարություններն իրավասու են կնքել փոխադարձ հատուկ համաձայնագրեր, եթե դրանք հեղինակին կապահովեն ավելի լայն իրավունքներ, քան սահմանված են սույն Կոնվենցիայով կամ կբովանդակեն սույն Կոնվենցիային չհակասող այլ դրույթներ: Գործող համաձայնագրերի այդ պահպանողները բավարարող դրույթները կհամարվեն կիրառելի:

Հոդված 21*

*(Զարգացող երկրների վերաբերյալ հատուկ դրույթներ. 1. Հղում՝ Լրացուցիչ Բաժնին.
2. Լրացուցիչ Բաժինը որպես Ակտի մաս)*

1. Զարգացող երկրների վերաբերյալ հատուկ դրույթները ներկայացված են Լրացուցիչ Բաժնում:
2. Հաշվի առնելով 28(1) (բ) հոդվածի դրույթները՝ Լրացուցիչ Բաժինը կազմում է սույն Ակտի անօտարելի մասը:

Հոդված 29

*(Միության անդամ չհանդիսացող երկրների համար ընդունումն ու ուժի մեջ մտնելը.
1. Միանալը. 2. Ուժի մեջ մտնելը)*

1. Միության անդամ չհանդիսացող ցանկացած երկիր կարող է միանալ սույն Ակտին եւ այդպիսով դառնալ սույն Կոնվենցիայի կողմ ու Միության անդամ: Միանալու մասին ակտերն ի պահ են հանձնվում Գլխավոր Տնօրենին:

2. ա) Հաշվի առնելով (դ) ենթակետը, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Միության անդամ չհանդիսացող ցանկացած երկրի նկատմամբ երեք ամիս անց՝ նրա միանալու մասին ակտը Գլխավոր Տնօրենին ի պահ հանձնելու մասին ծանուցման ամսաթվից, եթե միայն ավելի ուշ ամսաթիվ նշված չէ միանալու մասին ակտում: Վերջին դեպքում սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ երկրի նկատմամբ այդ ձեւով նշված ամսաթվից:

բ) եթե ուժի մեջ մտնելը (ա) ենթակետի համապատասխան նախորդում է 121 հոդվածների եւ Լրացուցիչ Բաժնի ուժի մեջ մտնելուն, ապա 28(2) հոդվածի համապատասխան նշված երկիրը այդ ընթացքում կապված կլինի 121 հոդվածների եւ Լրացուցիչ Բաժնի փոխարեն սույն Կոնվենցիայի Բրյուսելի ակտի 120 հոդվածներով:

Հոդված 29 bis

*(ՄՄՀԿի կոնվենցիայի 14(2) հոդվածի նպատակների համար Ակտն ընդունելու
հետեւանքները)*

Սույն Ակտի վավերացումը կամ դրան միանալը ցանկացած երկրի համար, որը կապված չէ սույն Կոնվենցիայի Ստոկհոլմի ակտի 22ից 38 հոդվածներով, հանդիսանում է հավասարազոր բացառապես Կազմակերպությունը հիմնադրող Կոնվենցիայի 14(2) հոդվածի նպատակների համար նշված Ստոկհոլմյան ակտի վավերացմանը կամ դրան միանալու մասին ակտին այն սահմանափակումներով, որ նախատեսված է այդ ակտի 28 (1) (բ) (i) հոդվածով:

* 2228 հոդվածները վերաբերում են Միության ղեկավար մարմինների կազմավորմանը:

Հոդված 30

(Վերապահություններ. 1. Վերապահություն կատարելու հնարավորությունների սահմանափակում. 2. Նախապես արված վերապահություններ, թարգմանության իրավունքի նկատմամբ վերապահություններ. վերապահությունների բացառում)

1. Բացառությամբ սույն հոդվածի (2) կետով, 28 (1) (բ) եւ 33 (2) հոդվածներով ու Լրացուցիչ Բաժնով թույլատրվող բացառումներին, վավերացումը կամ միանալը ինքնաբերաբար հանգեցնում են սույն Կոնվենցիայի բոլոր դրույթների ճանաչմանն ու սահմանված արտոնությունները ստանալուն:

2. ա) Միության անդամ ցանկացած երկիր, որը վավերացնում է սույն Ակտը կամ միանում է դրան, կարող է Լրացուցիչ Բաժնի V(2) հոդվածի համաձայն պահպանել իր կողմից նախապես ձեռնարկված վերապահությունների արտոնությունը, պայմանով, եթե այդ մասին հայտարարությունն արվի վավերացման գիրը կամ միանալու մասին ակտը ի պահ հանձնելիս:

բ) Միության անդամ չհանդիսացող ցանկացած երկիր սույն Կոնվենցիային միանալիս եւ Լրացուցիչ Բաժնի V(2) հոդվածի համաձայն կարող է հայտարարել, որ ինքը մտադիր է, ծայրահեղ դեպքում, ժամանակավոր փոխարինել սույն Ակտի 8րդ հոդվածը՝ թարգմանության իրավունքի վերաբերյալ 1896թ. Փարիզում լրացված 1886թ. միութենական Կոնվենցիայի 5 հոդվածի դրույթներով, պարզ ըմբռնումով, որ այդ դրույթները կիրառվում են միայն այդ երկրի լայն կիրառում ունեցող լեզվի նկատմամբ: Հաշվի առնելով Լրացուցիչ Բաժնի 1 (6) (բ) հոդվածը, Միության ցանկացած երկիր իրավասու է կիրառել երկերի թարգմանությունների նկատմամբ, որոնց մայր երկիրը այդպիսի վերապահություններից օգտվող երկիր է, այնպիսի պահպանություն, որը հավասարազոր է վերջին երկրում նախատեսված պահպանությանը:

գ) Ցանկացած երկիր կարող է ցանկացած ժամանակ բացառել այդպիսի վերապահությունները Գլխավոր Տնօրենին ուղարկած ծանուցման միջոցով:

Հոդված 31

(Որոշ տարածքների նկատմամբ կիրառումներ, 1. Հայտարարություններ 2. Ուժի մեջ մտնելու ժամկետը, 4. Փաստացի իրավիճակը ենթակա չէ ընդունման)

1. Ցանկացած երկիր կարող է հայտարարել իր վավերացման գրում կամ միանալու մասին ակտում կամ հաջորդող ցանկացած ժամանակ ուղարկել Գլխավոր Տնօրենին գրավոր ծանուցում այն մասին, որ սույն Կոնվենցիան կիրառվում է բոլոր կամ որոշ տարածքների նկատմամբ, որոնք նշված են հայտարարություններում կամ ծանուցումներում, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատվություն է կրում ինքը:

2. Ցանկացած երկիր, որն արել է այդպիսի հայտարարություն կամ ուղարկել նման ծանուցում, կարող է ցանկացած ժամանակ ծանուցել Գլխավոր Տնօրենին որոշ կամ բոլոր այդպիսի տարածքների նկատմամբ սույն Կոնվենցիայի կիրառումը դադարեցնելու մասին:

3. ա) Իին կետին համապատասխան արված ցանկացած հայտարարություն ուժի մեջ է մտնում այն ժամկետից, երբ կատարվել է վավերացումը կամ միանալը, որոնց մասին փաստաթղթերը ներառում են այդ դիմումը, իսկ նշված կետին համապատասխան բոլոր ուղարկված ծանուցումները ուժի մեջ են մտնում երեք ամիս անց՝ այդ մասին Գլխավոր Տնօրենի կատարած հայտարարությունից հետո:

բ) ցանկացած ծանուցում, որն ուղարկվել է (2) կետին համապատասխան, ուժի մեջ է մտնում Գլխավոր Տնօրենի կողմից այն ստանալու օրից 12 ամիս անց:

4. Սույն հոդվածը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես լուր համաձայնություն կամ Միության անդամ ցանկացած երկրի կողմից փաստացի իրավիճակի ընդունում այն տարածքների

նկատմամբ, որոնց նկատմամբ սույն Կոնվենցիան կիրառվում է Միության անդամ այլ երկրների կողմից (1) կետին համապատասխան արված հայտարարության ուժով:

Հոդված 32

(Սույն Ակտի եւ ավելի վաղ Ակտերի կիրառում. 1. Այն երկրների միջեւ, որոնք արդեն Միության անդամներ են. 2. Ցանկացած երկրի, որը դառնում է Միության անդամ եւ մյուս անդամերկրների միջեւ. Որոշ դեպքերում Լրացուցիչ Բաժնի դրույթների կիրառումը)

1. Սույն Ակտը փոխարինում է Միության անդամ երկրների հարաբերություններում 1886թ. սեպտեմբերի 9ի Բեռնի Կոնվենցիային եւ դրա վերանայմանն հաջորդող ակտերին եւ այն չափով, ինչ կիրառվում է: Ավելի վաղ գործողության մեջ մտած ակտերը շարունակում են կիրառվել ամբողջությամբ կամ այն չափով, ինչքանով սույն Ակտը չի փոխարինում դրանց նախորդ նախադասության ուժով Միության անդամ այն երկրների փոխհարաբերություններում, որոնք չեն վավերացնում սույն Ակտը կամ չեն միանում դրան:

2. Միության անդամ չհանդիսացող երկրները, որոնք դառնում են սույն Ակտի կողմեր, հաշվի առնելով (3) կետը, կիրառում են այն Միության ցանկացած երկրի նկատմամբ, որը կապված չէ սույն Ակտով, կամ թեեւ կապված է սույն Ակտով, բայց արել է 28 (1) (բ) հոդվածով նախատեսված հայտարարությունը: Այդպիսի երկրներն ընդունում են, որ Միության նշված երկիրը իրենց հարաբերություններում իրենց հետ՝

- i) կարող է կիրառել վերջին նախորդող ակտի դրույթները, որին ինքը կապված է
- ii) հաշվի առնելով Լրացուցիչ Բաժնի 1(6) հոդվածը, իրավունք ունի հարմարեցնել պահպանությունը այն մակարդակին, որը նախատեսված է սույն Ակտով:

3. Յուրաքանչյուր երկիր, որն օգտվել է Լրացուցիչ Բաժնով նախատեսված ցանկացած հնարավորությունից, կարող է կիրառել Լրացուցիչ Բաժնի իրավունքներին կամ հարաբերություններին վերաբերող դրույթները, որոնցից նա օգտվել է, իր հարաբերություններում Միության ցանկացած երկրի հետ, որը սույն Ակտով կապված չէ, պայմանով, որ այդ վերջին երկիրը թույլատրում է նշված դրույթների կիրառում:

Հոդված 33.

(Վեճերը, 1. Միջազգային դատարանի իրավասությունը, 2. Այդպիսի իրավասության նկատմամբ վերապահությունը, 3. Վերապահության բացառում)

1. Միության երկու կամ ավելի երկրների միջեւ ցանկացած վեճ սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման վերաբերյալ, որը չի լուծվել բանակցությունների միջոցով, նշված երկրներից ցանկացածի կողմից կարող է հանձնվել Միջազգային դատարան, Դատարանի Կարգավիճակին համապատասխան դիմում ներկայացնելով, եթե նշված երկրները չեն պայմանավորվում վեճը կարգավորելու այլ միջոցների շուրջ: Երկիրը, որը դիմում է ներկայացնում, պետք է տեղեկացնի Միջազգային բյուրոյին Դատարանի քննարկմանը ներկայացված վեճի մասին: Միջազգային Բյուրոն պետք է այդ մասին տեղյակ պահի Միության անդամ մյուս երկրներին:

2. Սույն Ակտը ստորագրելու կամ վավերացման գիրը կամ միանալու մասին ակտը ի պահ հանձնելու պահին ցանկացած երկիր կարող է հայտարարել, որ իրեն կապված չի համարում (1) կետի դրույթներով: Ինչ վերաբերում է այդպիսի երկրի եւ Միության անդամ այլ երկրի միջեւ վեճերին, ապա (1) կետի դրույթները նրանց վրա չեն տարածվում:

3. Ցանկացած երկիր, որը հայտարարություն է արել (2) կետի դրույթների համաձայն, կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել այն՝ Գլխավոր Տնօրենին ուղարկված ծանուցման միջոցով:

Հոդված 34.

(Որոշ, ավելի վաղ դրույթների դադարեցում (փակում). 1. Նախորդող ակտերի. 2. Ստոկհոլմի ակտի վերաբերյալ արձանագրություն)

1. Հաշվի առնելով 29bis հոդվածը, ոչ մի երկիր չի կարող վավերացնել սույն Կոնվենցիային նախորդող ակտերը կամ միանալ դրանց 1ից 21 հոդվածները եւ Լրացուցիչ Բաժինը ուժի մեջ մտնելուց հետո:

2. 1ից 21 հոդվածները եւ Լրացուցիչ Բաժինը ուժի մեջ մտնելուց հետո ոչ մի երկիր չի կարող զարգացող երկրների նկատմամբ հայտարարություն անել, որը նախատեսված է Ստոկհոլմի ակտին կից Արձանագրության 5րդ հոդվածով:

Հոդված 35.

(Կոնվենցիայի գործողության ժամկետը. չեղյալ հայտարարումը, 1. Անսահմանափակ ժամկետ. 2. Չեղյալ հայտարարելու հնարավորություն. 3. Չեղյալ հայտարարությունն ուժի մեջ մտնելու ժամկետը. 4. Չեղյալ հայտարարության հետաձգում)

1. Սույն Կոնվենցիան գործում է առանց ժամկետի սահմանափակման:

2. Ցանկացած երկիր կարող է չեղյալ հայտարարել սույն Ակտը Գլխավոր Տնօրենին ուղարկված ծանուցման միջոցով: Այդպիսի չեղյալ հայտարարումը նշանակում է չեղյալ հայտարարել նաեւ բոլոր նախորդ ակտերը եւ տարածվում է միայն հայտարարություն կատարող երկրի վրա, իսկ Միության անդամ մյուս երկրների նկատմամբ Կոնվենցիան մնում է ուժի մեջ եւ ենթակա է կատարման:

3. Չեղյալ հայտարարությունն ուժի մեջ է մտնում մեկ տարի անց՝ հաշված ծանուցումը Գլխավոր Տնօրենի ստանալու օրից:

4. Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարության իրավունքը չի կարող օգտագործվել որեւէ երկրի կողմից հինգ տարի՝ հաշված նրա Միության անդամ դառնալու օրից:

Հոդված 36

(Կոնվենցիայի կիրառումը. 1. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն. 2. Պահը, որից սկսվում է պարտավորությունը)

1. Յուրաքանչյուր երկիր, որը սույն Կոնվենցիայի մասնակից է, պարտավորվում է ձեռնարկել իր Սահմանադրությանը համապատասխան անհրաժեշտ միջոցներ սույն Կոնվենցիայի կիրառումն ապահովելու համար:

2. Ենթադրվում է, որ յուրաքանչյուր երկիր սույն Կոնվենցիային միանալու պահից ի վիճակի է դառնում իրագործել սույն Կոնվենցիայի դրույթները՝ իր ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 37

(Եզրափակիչ դրույթներ. 1. Ակտի լեզուն. 2. Ստորագրությունը. 3. Հաստատված պատճեններ. 4. Գրանցում. 5. Ծանուցում)

1. ա) Սույն Ակտը ստորագրվում է մեկական օրինակ անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով եւ 2րդ կետի համաձայն ի պահ հանձնվում Գլխավոր Տնօրենին:

բ) Պաշտոնական տեքստերը մշակվում են Գլխավոր Տնօրենի կողմից շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո արաբերեն, իսպաներեն, իտալերեն, գերմաներեն եւ պորտուգալերեն լեզուներով, ինչպես նաեւ այլ լեզուներով, որոնք կորոշի Ընդհանուր Ժողովը:

գ) Տարբեր տեքստերի մեկնաբանությունների ժամանակ տարաձայնությունների դեպքում գերադասությունը տրվում է ֆրանսերեն տեքստին:

2. Սույն Ակտը բաց է ստորագրման համար մինչեւ 1972թ. հունվարի 31ը: Մինչեւ այդ ժամկետը 1(ա) կետում նշված օրինակը ի պահ է տրվում Ֆրանսիական Հանրապետության կառավարությանը:

3. Գլխավոր Տնօրենը հաստատում է եւ ուղարկում սույն Ակտի ստորագրված տեքստի երկու պատճենը Միության անդամ բոլոր երկրների կառավարություններին եւ, հարցման դեպքում, ցանկացած այլ երկրի կառավարությանը:

4. Գլխավոր Տնօրենը գրանցում է սույն Ակտը Միացյալ ազգերի կազմակերպության Քարտուղարությունում:

5. Գլխավոր Տնօրենը ¹⁴³ծանուցում է Միության անդամ բոլոր երկրների կառավարություններին ստորագրման մասին, վավերացման գրի ու միանալու մասին ակտերի ի պահ հանձնման եւ հայտարարությունների մասին, որոնք պարունակվում են այդ փաստաթղթերում կամ արվել են 28 (1) (գ), 30 (2) (ա), (բ) եւ 33 (2) հոդվածներին համապատասխան սույն Ակտի ցանկացած դրույթ ուժի մեջ մտնելու մասին, որոնք ծանուցում են չեղյալ հայտարարության եւ 30 (2) (գ), 31 (1) եւ (2), 33 (3) եւ 38 (1) հոդվածների համապատասխան ուղարկված ծանուցումների մասին, ինչպես նաեւ Լրացուցիչ Բաժնով նախատեսված ծանուցումների մասին:

Հոդված 38

(Փոխանցվող (անցողիկ) դրույթներ. 1. «Հնգամյա» արտոնության օգտագործում. 2. Միության Բյուրո, Բյուրոյի Տնօրեն. 3. Միության Բյուրոյի ժառանգորդությունը)

1. Միության անդամ երկրները, որոնք չեն վավերացրել սույն Ակտը կամ չեն միացել դրան, կամ որոնք կապված չեն սույն Կոնվենցիայի Ստոկհոլմյան ակտի 22ից 26 հոդվածներով, կարող են, ցանկության դեպքում, մինչեւ 1975թ. ապրիլի 26ը օգտվել նշված հոդվածներով նախատեսված իրավունքներից այնպես, ինչպես եթե կապված լինեին այդ հոդվածներով: Ցանկացած երկիր, որը ցանկանում է օգտվել այդպիսի իրավունքից, այդ նպատակով ուղարկում է Գլխավոր Տնօրենին գրավոր ծանուցում, որը գործողության մեջ է մտնում նրա ստացման օրից: Այդպիսի երկրները համարվում են Ընդհանուր Ժողովի անդամներ մինչեւ նշված ժամկետը:

2. Այնքան ժամանակ, քանի դեռ Միության ոչ բոլոր երկրներն են դարձել Կազմակերպության անդամներ, Կազմակերպության Միջազգային Բյուրոն գործում է որպես Միության Բյուրո, իսկ Գլխավոր Տնօրենը գործում է որպես այդ բյուրոյի տնօրեն:

3. Հենց որ Միության բոլոր երկրները դառնում են Կազմակերպության անդամներ, Միության Բյուրոյի իրավունքները, պարտականություններն ու գույքը փոխանցվում են Կազմակերպության Միջազգային Բյուրոյին:

Հոդված 1

(Զարգացող երկրներին մատչելի արտոնություններ. 1. Որոշ արտոնությունների առկայություն, հայտարարություններ. 2. Հայտարարության գործողության տևողությունը. 3. Զարգացող երկրի կարգավիճակի դադարում. 4. Օրինակների առկա պահեստ, (պահեստային օրինակներ). 5. Որոշ տարածքների վերաբերյալ հայտարարություն. 6. Փոխադարձության սահմաններ)

1. Ցանկացած երկիր, որը համարվում է ՄԱԿի Գլխավոր Ասամբլեայի կողմից սահմանված պրակտիկայի համապատասխան զարգացող երկիր, որը վավերացնում է կամ միանում է սույն Ակտին, որի անօտարելի մասն է կազմում սույն Լրացուցիչ Բաժինը, եւ որը՝ ուշադրության առնելով իր տնտեսական վիճակը եւ իր սոցիալմշակութային պահանջները, իրեն անկարող է համարում անմիջապես գործողության մեջ դնել սույն Ակտով նախատեսված բոլոր իրավունքների պահպանության վերաբերյալ դրույթները, կարող է վավերագրերի կամ միանալու մասին ակտը Գլխավոր Տնօրենին ի պահ հանձնելու մասին ծանուցման միջոցով, կամ հաշվի առնելով V (1) (գ) հոդվածը, ցանկացած հաջորդող ժամանակ հայտարարել, որ ինքը օգտվելու է II հոդվածով կամ III հոդվածով նախատեսված արտոնություններից կամ այդ երկու արտոնություններից: Այդ երկիրը կարող է II հոդվածով նախատեսված արտոնությունից օգտվելու փոխարեն հայտարարություն անել V (1) (ա) հոդվածին համապատասխան:

2. ա) (1) կետին համապատասխան ցանկացած հայտարարություն, որն արվել է մինչեւ 10ամյա ժամանակաշրջանի ավարտը, 1ից մինչեւ 21 հոդվածների եւ Լրացուցիչ Բաժնի ուժի մեջ մտնելուց հետո, 28 (2) հոդվածի համաձայն, գործում է մինչեւ նշված ժամանակաշրջանի ավարտը: Ցանկացած այդպիսի հայտարարություն կարող է նորոգվել ամբողջությամբ կամ մասամբ՝ յուրաքանչյուր դեպքում 10 տարի ժամանակով, Գլխավոր Տնօրենին ի պահ հանձնված ծանուցման միջոցով՝ ընթացիկ 10ամյա ժամանակաշրջանի ավարտից ոչ ավել քան 15, եւ ոչ պակաս քան երեք ամիս առաջ:

բ) 10ամյա ժամանակաշրջանի ավարտից հետո (1) կետին համապատասխան արված ցանկացած հայտարարություն, 1ից 21 հոդվածները եւ Լրացուցիչ Բաժինը 28 (2) հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո գործում է մինչեւ ընթացիկ 10ամյա ժամանակաշրջանի ավարտը: Ցանկացած այդպիսի հայտարարություն կարող է նորոգվել, ինչպես նախատեսված է (ա) ենթակետի 2րդ նախադասության մեջ:

3. Միության ցանկացած երկիր, որը դադարել է զարգացող երկիր համարվելուց, (1) կետին համապատասխան չի կարող նորոգել իր հայտարարությունը, ինչպես այդ նախատեսված է (2) կետում, անկախ նրանից, թե նա իր հայտարարությունը պաշտոնապես հետ կվերցնի թե ոչ, չի կարող օգտվել (1) կետով սահմանված արտոնություններից ընթացիկ 10ամյա ժամանակաշրջանի ավարտից հետո, կամ 3ամյա ժամանակաշրջանի ավարտից հետո՝ զարգացող երկիր չհամարվելու պատճառով: Այդպիսի դեպքերում կիրառվում է այն ժամանակաշրջանը, որն ավարտվում է ավելի ուշ:

4. Այնտեղ, որտեղ (1) եւ (2) կետերին համապատասխան արված հայտարարությունը դադարում է գործելուց, եւ այդ ժամանակ պահեստում կան օրինակներ, որոնք պատրաստված են եղել սույն

Լրացուցիչ Բաժնի իրավասության սահմաններում նախատեսված թույլտվությամբ, դրանց տարածումը կարող է շարունակվել մինչև պահեստային օրինակների լրիվ բաժանումը:

5. Ցանկացած երկիր, որը կապված է սույն Ակտի դրույթներով, եւ որը 31 (1) կետի համապատասխան ի պահ է հանձնել որեւէ տարածքի նկատմամբ սույն Ակտի կիրառման վերաբերյալ հայտարարությունը կամ ծանուցումը, որի վիճակը կարող է դիտվել (1) կետում նշված երկրների դրության նմանատիպ, կարող է այդպիսի տարածքի նկատմամբ (1) կետով սահմանված հայտարարություն անել եւ ծանուցել (2) կետում նշված նորոգման մասին: Այդպիսի հայտարարության կամ ծանուցման գործողության ժամկետի ընթացքում այդպիսի տարածքի նկատմամբ կիրառվում են սույն Լրացուցիչ Բաժնի դրույթները:

6. ա) Այն հանգամանքը, որ որեւէ երկիր օգտվում է (1) կետով սահմանված արտոնություններից, այլ երկրի համար հնարավորություն չի ստեղծում երկերի նկատմամբ, որոնց մայր երկիրն առաջին երկիրն է, նախատեսել պահպանություն ավելի քիչ ծավալով, քան այն, որ նա պարտավոր է նախատեսել 1ից 20 հոդվածների համաձայն:

բ) Համարժեք պահպանություն կիրառելու իրավունքը, որը նախատեսված է 30 (2) (բ) /երկրորդ նախադասություն/ հոդվածով, չի կարող օգտագործվել այն երկերի նկատմամբ, որոնց մայր երկիրը հանդիսանում է V (1) (ա) հոդվածի համաձայն հայտարարություն կատարած երկիրը, ավելի վաղ այն ժամկետից, երբ լրանում է 3րդ հոդվածի համաձայն սահմանված ժամանակաշրջանը:

Հոդված II

(Թարգմանության իրավունքի սահմանափակում. 1. Իրավասու մարմինների կողմից տրվող թույլտվություններ /լիցենզիաներ/ (2ից 4ր), Այդպիսի թույլտվություններ տալու պայմանները. 5. Նպատակները, որոնց համար կարող են այդպիսի թույլտվություններ տրվել. 6. Թույլտվության գործողության դադարեցում. 7. Հիմնականում պատկերագրողումներից /իյուստրացիա/ բաղկացած երկեր. 8. Շրջանառությունից հանված երկեր. 9. Եթեր հաղորդումներ իրականացնող կազմակերպությունների համար թույլտվություններ)

1. Ցանկացած երկիր, որը հայտարարել է, որ ինքն օգտվելու է սույն հոդվածով սահմանված արտոնություններից, կարող է տպագիր լույս ընծայված կամ համանման այլ միջոցներով վերարտադրված երկերի նկատմամբ ճրդ հոդվածով նախատեսված թարգմանության բացառիկ իրավունքը փոխարինել ոչ բացառիկ եւ չփոխանցվող թույլտվության համակարգով, որը տրվում է իրավասու մարմինների կողմից ներքոհիշյալ պայմաններով եւ հոդված IV հաշվի առնելով:

2. ա) Հաշվի առնելով (3) կետը, եթե եռամյա կամ երկի առաջին լույսընծայման տարեթվից հաշված՝ նշված երկրի օրենսդրությամբ սահմանված ցանկացած ավելի տեւական ժամանակաշրջանի ավարտից հետո այդպիսի երկի թարգմանությունը լույս չի ընծայվել տվյալ երկրում ընդհանուր գործածական լեզվով թարգմանության իրավունք կրող անձի կողմից կամ նրա թույլտվությամբ, այդպիսի երկրի ցանկացած քաղաքացի կարող է թույլտվություն ստանալ կատարելու երկի թարգմանություն՝ նշված լեզվով եւ լույս ընծայել այդպիսի թարգմանությունը տպագիր կամ վերարտադրության համանման միջոցներով:

բ) Սույն հոդվածով նախատեսված պայմաններով թույլտվություն կարող է տրվել նաեւ այնպիսի դեպքերում, երբ տվյալ լեզվով լույս ընծայված թարգմանության բոլոր հրատարակությունները ամբողջությամբ իրացվել են:

3. ա) Միության մեկ կամ մի քանի զարգացած անդամ երկրներում ընդհանուր գործածական չհանդիսացող լեզվով թարգմանության դեպքում մեկ տարի ժամանակաշրջանը փոխարինվում է (2) (ա) կետով նախատեսված երեք տարի ժամանակաշրջանով:

բ) (1) կետով նշված ցանկացած երկիր Միության զարգացած անդամ երկրների հետ միաձայն պայմանավորվածությամբ, որոնց տարածքում այդ նույն լեզուն հանդիսանում է ընդհանուր գործածական, կարող է փոխարինել այդ լեզվով թարգմանության դեպքում (2) (ա) կետով սահմանված երեք տարի ժամանակաշրջանը ավելի կարճ ժամանակաշրջանով, որը համաձայնեցված է այդ պայմանավորվածության ընթացքում, ընդ որում այդպիսի ժամանակաշրջանը մեկ տարի պակաս չի կարող լինել: Սակայն նախորդ նախադասության դրույթը չի տարածվում անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուների վրա: Կառավարությունները, որոնք այդպիսի պայմանավորվածություն են ձեռք բերել, այդ մասին ծանուցում են Գլխավոր Տնօրենին:

4. ա) Մույն հոդվածի դրույթներին համապատասխան թույլտվությունները, որոնք ստացվում են երեք տարի հետո, չեն կարող տրվել մինչև լրացուցիչ վեցամսյա ժամանակաշրջանի ավարտը, իսկ թույլտվությունները, որոնք ստացվում են մեկ տարի հետո՝ մինչև լրացուցիչ իննամսյա ժամանակաշրջանի ավարտը.

i) այն օրից, երբ թույլտվության համար դիմողը կկատարի IV (1) հոդվածով թվարկված պահանջները, կամ՝

ii) եթե հայտնի չեն թարգմանության իրավունք կրողի անձը կամ հասցեն՝ այն օրից, երբ թույլտվության համար դիմողը կուղարկի, ինչպես նախատեսված է IV (2) հոդվածում, իր դիմումի պատճենը թույլտվություն տալու համար լիազորված տվյալ մարմնին.

բ) Մույն հոդվածով նախատեսված թույլտվությունը չի տրվում, եթե թարգմանությունն այն լեզվով, որի համար դիմում էր տրված, լույս է ընծայվում թարգմանության իրավունք կրող անձի կողմից կամ նրա թույլտվությամբ նշված 6 կամ 9 ամիսների ընթացքում:

5. Մույն հոդվածի դրույթներին համապատասխան ցանկացած թույլտվություն տրվում է միայն դպրոցներում, համալսարաններում օգտագործելու համար կամ հետազոտությունների նպատակով:

6. Եթե երկի թարգմանությունը լույս է ընծայվում թարգմանության իրավունք կրող անձի կողմից կամ նրա թույլտվությամբ այն գների համապատասխան, որոնք սովորաբար սահմանվում են երկրում համանման երկերի համար, սույն հոդվածի դրույթներին համապատասխան տրվող ցանկացած թույլտվություն դադարեցնում է իր գործողությունը, եթե այդպիսի թարգմանությունը կատարված է այն նույն լեզվով և հիմնականում այն նույն բովանդակությամբ, ինչ որ թույլտվությամբ լույս ընծայված թարգմանությունը: Մինչև թույլտվության ուժը կորցնելը լույս տեսած բոլոր օրինակները կարող են շարունակել տարածվել այնքան ժամանակ, քանի դեռ լրիվ չեն իրացվել:

7. Երկերի համար, որոնք հիմնականում կազմված են պատկերազարդումներից, թարգմանության ու տեքստի լույս ընծայման, վերարտադրության ու պատկերազարդումների լույս ընծայման համար թույլտվությունը տրվում է միայն, եթե կատարվում են նաև II հոդվածի պայմանները:

8. Մույն հոդվածի համապատասխան թույլտվությունը չի կարող տրվել, եթե հեղինակը շրջանառությունից հանել է իր երկի բոլոր օրինակները:

9. ա) Տպագիր կամ համանման ձևով վերարտադրությամբ լույս տեսած երկի թագմանության համար թույլտվությունը կարող է տրվել նաև ցանկացած ռադիոհաղորդող կազմակերպությանը, որն իր նստավայրն ունի (1) կետում նշված երկրում, այդ կազմակերպության կողմից տվյալ երկրի իրավասու մարմնին դիմում ներկայացնելիս, եթե այդ դեպքում կատարվում են հետևյալ բոլոր պայմանները.

i) թարգմանությունն իրականացվում է այն օրինակից, որը պատրաստվել է և ձեռք է բերվել տվյալ երկրի օրենքներին համապատասխան.

ii) թարգմանությունը նախանշվում է օգտագործել միայն այն ռադիոհաղորդումներում, որոնք ուղղված են բացառապես ուսուցողական նպատակների կամ հատուկ տեխնիկական ու գիտական հետազոտությունների արդյունքները կոնկրետ մասնագետների միջև տարածելուն

iii) թարգմանությունն օգտագործվում է բացառապես (ii) պայմանում նշված նպատակների համար՝ տվյալ երկրի տարածքում լսողների համար նախատեսված օրինական իրականացվող հաղորդումներում, ներառյալ այն հաղորդումները, որոնք իրականացվում են հատուկ այդպիսի նպատակների համար եւ օրինական պատրաստված ձայնային կամ պատկերային գրանցումների միջոցով.

iV) թարգմանության յուրաքանչյուր օգտագործում չի հետապնդում կոմերցիոն նպատակ.

բ) Թարգմանության ձայնային կամ պատկերային գրանցումները, որոնք արված են ռադիոհաղորդող կազմակերպության կողմից՝ սույն կետի համաձայն տրված թույլտվության հիման վրա, կարող են՝ (ա) ենթակետում թվարկված նպատակներով ու պայմանները հաշվի առնելով եւ այդ կազմակերպության հանձնարարությամբ, օգտագործվել նաեւ ցանկացած այլ ռադիոհաղորդող կազմակերպության կողմից, որն ունի իր նստավայրը այն երկրում, որի իրավասու մարմինն է տվել սույն թույլտվությունը:

գ) ա) ենթակետում շարադրված բոլոր չափանիշներն ու պայմանները կատարելու պայմանով, թույլտվություն կարող է տրվել նաեւ ռադիոհաղորդող կազմակերպությանը ցանկացած տեքստի թարգմանության համար, որն ընդգրկված է տեսալսողական գրանցման մեջ, որը պատրաստվել է լույս է ընծայվել բացառապես պարբերաբար ուսուցման համար օգտագործելու նպատակով:

դ) Հաշվի առնելով (ա)ից (գ) ենթակետերը, նախորդ կետերի դրույթները կիրառվում են սույն կետի համաձայն տրվող թույլտվությունների հանձնման ու իրացման ժամանակ:

Հոդված III

(Վերարտադրության իրավունքի սահմանափակում. 1. Իրավասու մարմնի կողմից տրվող թույլտվություններ. 25. Այդպիսի թույլտվություններ տալու պայմանները. 6. Թույլտվության գործողության դադարեցում. 7. Երկեր, որոնց նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը)

1) Ցանկացած երկիր, որը հայտարարել է, որ ինքն օգտվելու է սույն հոդվածով նախատեսված արտոնություններից, իրավունք ունի փոխարինել 9րդ հոդվածում նախատեսված վերարտադրության բացառիկ իրավունքները ոչ բացառիկ եւ չփոխանցվող թույլտվությունների համակարգով, որը տրվում է իրավասու մարմնի կողմից՝ հաշվի առնելով 4րդ հոդվածը, եւ հետեւյալ պայմաններով.

2) ա) Եթե երկի նկատմամբ, որի վերաբերյալ սույն հոդվածը կիրառվում է (7) կետի ուժով,

i) համապատասխան ժամանակաշրջանը լրանալուց հետո, որը սահմանվում է 3րդ կետով, հաշված երկի տվյալ հրատարակության առաջին լույս ընծայման ժամկետից, կամ

ii) ցանկացած ավելի երկար ժամանակաշրջանը լրանալուց հետո, որը որոշված է (1) կետում նշված երկրի ազգային օրենսդրությամբ, հաշված նույն այդ տարեթվից.

Այդպիսի հրատարակության օրինակները տարածված չեն եղել այդ երկրի հասարակայնության մեջ կամ պարբերաբար ուսուցման առնչությամբ՝ վերարտադրության իրավունք կրող անձի կողմից կամ նրա թույլտվությամբ համապատասխան գներով, որոնք սովորաբար սահմանվում են այդ պետության մեջ նմանատիպ երկերի համար, այդպիսի երկրի ցանկացած քաղաքացի կարող է

ստանալ վերարտադրության եւ այդպիսի հրատարակության նույն կամ ավելի պակաս գներով լույս ընծայման թույլտվություն՝ պարբերաբար ուսուցման առնչությամբ օգտագործելու համար:

բ) Թույլտվությունը (ա) ենթակետում նշված ձևով տարածված հրատարակության վերարտադրության եւ լույս ընծայման համար կարող է տրվել նաեւ այն պայմաններով, որոնք նախատեսված են սույն հոդվածում, եթե կիրառվող ժամանակաշրջանի ավարտից հետո վեցամսյա ժամանակաշրջանի ընթացքում այդ հրատարակության թույլատրված ոչ մի օրինակ տվյալ երկրի հասարակայնության մեջ կամ պարբերաբար ուսուցման առնչությամբ վաճառքի առարկա չի եղել այն համապատասխան գներով, որոնք սովորաբար սահմանվում են այդ երկրում նմանատիպ երկերի համար:

3) (2) (ա) (i) կետում նշված ժամանակաշրջանը կազմում է հինգ տարի, բացառությամբ.

(i) բնական եւ ճշգրիտ գիտությունների երկերի համար, ներառյալ մաթեմատիկական եւ տեխնիկական, այդ ժամանակաշրջանը կազմում է երեք տարի.

(ii) գեղարվեստական, չափածո, դրամատիկական, երաժշտական երկերի, ինչպես նաեւ արվեստի համար այդ ժամանակաշրջանը կազմում է յոթ տարի:

4) ա) Երեք տարի անց մատչելի դարձած ոչ մի թույլտվություն չի տրվում սույն հոդվածի համաձայն մինչեւ վեցամսյա ժամանակաշրջանի ավարտը

(i) այն ժամկետից, երբ դիմողը կկատարի IV (1) հոդվածում նշված պահանջները, կամ

(ii) դիմողի կողմից IV (2) հոդվածի համապատասխան թույլտվություն ստանալու համար իրավասու մարմին ներկայացրած դիմումի պատճենն ուղարկելու օրից, եթե հայտնի չէ վերարտադրության իրավունք կրող անձի ինքնությունն ու հասցեն:

բ) Եթե թույլտվությունները հանդիսանում են մատչելի ուրիշ ժամանակաշրջաններից հետո եւ IV (2) հոդվածն էլ հանդիսանում է կիրառելի, ոչ մի թույլտվություն չի տրվում մինչեւ դիմումի պատճենն ուղարկելու ժամկետից հետո երեքամսյա ժամանակաշրջանի ավարտվելը:

գ) Եթե (ա) եւ (բ) ենթակետերում նշված վեցամսյա կամ երեքամսյա ժամանակաշրջանների ընթացքում տարածումը, ինչպես նկարագրված է (2) (ա) կետում, տեղի է ունեցել, ոչ մի թույլտվություն չի տրվում սույն հոդվածի համապատասխան.

դ) Ոչ մի թույլտվություն չի տրվում, եթե հեղինակը շրջանառությունից հանել է հրատարակության բոլոր օրինակները, որոնց վերարտադրության ու լույս ընծայման համար է թույլտվություն պահանջվում:

5) Երկի թարգմանության ու լույս ընծայման թույլտվություն չի տրվում սույն հոդվածի համաձայն հետևյալ դեպքերում.

i) երբ թարգմանությունը չի արվել թարգմանության իրավունք ունեցող անձի կողմից կամ նրա թույլտվությամբ, կամ

ii) երբ թարգմանությունը չի արվել այն երկրի համընդհանուր գործածական լեզվով, որտեղ դիմել են թույլտվություն ստանալու համար:

6) Երբ վերարտադրության իրավունք կրող անձը կամ նրա թույլտվությամբ որեւէ մեկը տարածում է այդպիսի հրատարակության օրինակները (1) կետում նշված երկրում, հասարակայնության մեջ կամ պարբերաբար ուսուցման առնչությամբ այն համապատասխան գներով, որոնք սովորաբար սահմանվում են այդ երկրում նմանատիպ երկերի համար, սույն հոդվածի համաձայն տրվող ցանկացած թույլտվություն դադարեցնում է իր գործողությունը, եթե այդպիսի հրատարակությունը լույս է ընծայված այն նույն լեզվով եւ հիմնականում այն նույն բովանդակությամբ, ինչ որ թույլտվությամբ իրականացված հրատարակությունը: Մինչեւ թույլտվության ուժը կորցնելը լույս տեսած բոլոր օրինակները կարող են շարունակել տարածվել այնքան ժամանակ, քանի դեռ ամբողջությամբ չեն իրացվել:

7) (ա) Հաշվի առնելով (բ) ենթակետը, սույն հոդվածը տարածվում է այն երկերի վրա, որոնք լույս են տեսել տպագիր կամ վերարտադրության համանման ձևով:

բ) Սույն հոդվածը տարածվում է նաև օրինական կատարված տեսալսողական գրանցումների, ներառյալ նրանցում ընդգրկված հեղինակային իրավունքը պահպանվող ցանկացած երկերի, տեսալսողական վերարտադրությունների վրա, ինչպես նաև նրանցում ընդգրկված ցանկացած տեքստի թարգմանության վրա այն երկրի ընդհանուր գործածական լեզվով, որտեղ պահանջվում է թույլտվությունը, պայմանով, որ այդ բոլոր դեպքերում նշված տեսալսողական գրանցումները պատրաստված են եւ լույս ընծայված բացառապես պարբերաբար ուսուցման համար օգտագործելու նպատակով:

Հոդված IV

(II եւ III հոդվածներին համապատասխան տրվող թույլտվությունների համար ընդհանուր դրույթներ. 1 եւ 2. Ընթացակարգը. 3. Հեղինակի նշումը եւ երկի անվանումը. 4. Օրինակների արտահանում. 5. Ծանուցում. 6. Փոխհատուցում)

1. II եւ III հոդվածներին համապատասխան թույլտվությունները կարող են տրվել միայն պայմանով, եթե թույլտվության համար դիմողն ապացուցի այդ երկրում սահմանված կանոնների համաձայն, որ ինքը դիմել է թարգմանությունը պատրաստելու եւ լույս ընծայելու, կամ հրատարակությունը լույս ընծայելու կամ վերարտադրելու իրավունքը կրող անձին թույլտվություն ստանալու համար եւ մերժվել է նրա կողմից, կամ, որ անհրաժեշտ ջանքեր գործադրելուց հետո, չի կարողացել պարզել այդ իրավունքը կրող անձի ով լինելը: Թույլտվության համար դիմելիս դիմողը տեղեկացնում է այդ մասին (2) կետում նշված ցանկացած ազգային կամ միջազգային տեղեկատվական կենտրոն:

2. Եթե հնարավոր չէ պարզել իրավունք կրող անձին, ապա թույլտվություն ստանալու համար դիմողը թույլտվություն տալու համար իրավասու մարմնին ուղղված իր դիմումի պատճենը պատվիրված ավիափոստով ուղարկում է հրատարակչին, որի ազգանունը նշված է երկի վրա, ինչպես նաև ցանկացած ազգային կամ միջազգային կենտրոն, որը կարող է նշված լինել Գլխավոր Տնօրենին այն երկրի կառավարության կողմից ուղղված հայտարարագրում, որտեղ, ինչպես ենթադրվում է, հրատարակչին իրականացնում է իր մասնագիտական գործունեության հիմնական մասը:

3. Հեղինակի ազգանունը նշվում է թարգմանության կամ վերարտադրության բոլոր օրինակների վրա, որոնք լույս են տեսել II կամ III հոդվածներին համապատասխան տրված թույլտվությունների համաձայն: Երկի անվանումը տպագրվում է բոլոր այդպիսի օրինակների վրա: Թարգմանության դեպքում երկի բնագիր անվանումը ամեն դեպքում տպագրվում է նշված բոլոր օրինակների վրա:

4.ա) Ոչ մի թույլտվություն տրված II կամ III հոդվածներին համապատասխան, չի տարածվում երկի օրինակների արտահանման վրա եւ գործում է միայն թարգմանության լույս ընծայման կամ համապատասխանաբար վերարտադրության դեպքում այն երկրի սահմաններում, որտեղ դիմել են թույլտվություն ստանալու համար:

բ) (ա) ենթակետի նպատակների համար արտահանում հասկացությունը ներառում է օրինակների առաքում ցանկացած տարածքից այն երկիր, որն այդ տարածքի նկատմամբ հայտարարություն է արել I (5) հոդվածի համապատասխան:

գ) Երբ II հոդվածի համապատասխան ցանկացած լեզվով թարգմանությունն նախապատրաստելու համար, բացի անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն լեզուներից, թույլտվություն տված երկրի կառավարական կամ այլ կազմակերպությունն ուղարկում է թարգմանության այդպիսի թույլտվությամբ լույս տեսած օրինակները այլ երկիր, ապա օրինակների այդպիսի առաքումը (ա) ենթակետի նպատակների համար, արտահանում չի համարվում, եթե կատարված են հետեւյալ բոլոր պայմանները:

i) ստացողներ են հանդիսանում թույլտվություն տված երկրի քաղաքացիները կամ այդպիսի քաղաքացիներին միավորող կազմակերպությունները.

ii) օրինակները պետք է օգտագործվեն միայն դպրոցներում, համալսարաններում կամ հետազոտությունների նպատակով.

iii) օրինակների ուղարկումն ու դրանց հետագա տարածումը ստացողների միջեւ չի հետապնդում կոմերցիոն նպատակ եւ

iV) երկիրը, ուր ուղարկվում են օրինակները, համաձայնվել է այն երկրի հետ, որի իրվասու մարմինն է տվել թույլտվությունը, թույլատրել ստացումը, տարածումը կամ երկուսը միասին եւ Գլխավոր Տնօրենը տեղեկացվել է այդպիսի համաձայնության մասին այն երկրի կառավարության կողմից, որտեղ տրվել է թույլտվությունը:

5. Բոլոր օրինակները, որոնք լույս են ընծայվել II եւ III հոդվածների ուժով տրված թույլտվություններով, ունեն համապատասխան լեզվով ծանուցում այն մասին, որ օրինակները ենթակա են տարածման միայն այն երկրում կամ տարածքում, որի վրա տարածվում է տվյալ թույլտվությունը:

6. (ա) Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում ազգային մակարդակով ապահովելու.

i) որպեսզի թույլտվությունը նախատեսի արդարացի փոխհատուցման վճարումը ի օգուտ թարգմանության կամ, համապատասխանաբար, վերարտադրության իրավունք կրող անձի՝ հոնորարների այն համապատասխան չափերով, որոնք սովորաբար կիրառվում են թույլտվությունների նկատմամբ ազատ բանակցությունների դեպքում երկու համապատասխան երկրների անձանց միջեւ, եւ

ii) փոխհատուցման վճարումն ու փոխադրումը (փոստով առաքումը), եթե գոյություն ունեն ազգային դրամի հատուկ կանոններ, իրավասու իշխանությունները գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի միջազգային մեխանիզմների օգնությամբ ապահովեն փոխհատուցման փոխադրումը միջազգային ասպարեզում փոխանակվող տարադրամով կամ դրա համարժեքով:

(բ) Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում ազգային օրենսդրությամբ՝ ապահովելու տվյալ հրատարակության ճիշտ թարգմանությունը կամ, համապատասխանաբար, ճշգրիտ վերարտադրությունը:

Հոդված V

(Թարգմանության իրավունքը սահմանափակելու այտերնատիվ հնարավորություն. 1. Այդ ընթացակարգը. նախատեսված 1886 եւ 1896թթ. ակտերում. 2. II հոդվածի համաձայն ընթացակարգը փոփոխելու հնարավորության բացակայություն. 3. Այտերնատիվ հնարավորության ընտրության համար ժամկետ)

1.(ա) Ցանկացած երկիր, որն իրավունք ունի II հոդվածով նախատեսված արտոնություններից օգտվելու մասին հայտարարություն անելու, կարող է դրա փոխարեն սույն Ակտի վավերացման կամ դրան միանալու ժամանակ.

i) եթե այնպիսի երկիր է, որի նկատմամբ կիրառվում է 30(2) (ա) հոդվածը, թարգմանության իրավունքի վերաբերյալ սույն դրույթի համաձայն հայտարարություն անել.

ii) եթե այնպիսի երկիր է, որի նկատմամբ չի կիրառվում 30(2) (ա) հոդվածը եւ եթե չի մտնում Միության կազմի մեջ, հայտարարություն անել ինչպես նախատեսված է 30 (2) (բ) հոդվածի առաջին նախադասությունում.

բ) Եթե երկիրը դադարել է զարգացող երկիր համարվելուց, ինչպես նախատեսված է I (1) հոդվածով, սույն կետի համաձայն արված հայտարարությունը մնում է ուժի մեջ մինչև I (3) հոդվածով կիրառելի ժամկետը լրանալու օրը:

գ) Ցանկացած երկիր, որը հայտարարություն է արել սույն կետի համաձայն, չի կարող հետագայում օգտվել II հոդվածով նախատեսված արտոնություններից անգամ, եթե նա հետ վերցնի հայտարարությունը:

2. Հաշվի առնելով (3) կետը, ցանկացած երկիր, որն օգտվել է II հոդվածով նախատեսված արտոնություններից, չի կարող հետագայում հայտարարություն անել համաձայն (1) կետի:

3. Ցանկացած երկիր, որը դադարել է զարգացող երկիր համարվելուց, ինչպես նախատեսված է I (1) կետով, կարող է ոչ ուշ, քան I (3) հոդվածով նախատեսված ժամանակաշրջանն ավարտելուց երկու տարի առաջ հայտարարություն անել 30 (2) (բ) հոդվածի առաջին նախադասությամբ նախատեսված նպատակների համար, թեև այդ երկիրը Միության կազմում չի ընդգրկված: Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այն օրից, երբ ավարտվում է I (3) հոդվածի համաձայն կիրառվող ժամանակաշրջանը:

Հոդված VI

(Լրացուցիչ Բաժնի որոշ դրույթների կիրառման մատչելիություն կամ կիրառման հնարավորություն մինչև այն պահը, երբ երկրները կապվում են դրանցով. 1. Հայտարարություն. 2. Ի պահ հանձնումը եւ հայտարարությունն ուժի մեջ մտնելու ժամկետը)

1. Ցանկացած երկիր կարող է հայտարարել, սկսած սույն Ակտի ժամկետից եւ ցանկացած ժամանակ՝ մինչև այն պահը, երբ կապված կլինի 1ից 21 հոդվածներով եւ սույն Լրացուցիչ Բաժնի դրույթներով:

i) եթե դա այնպիսի երկիր է, որը, եթե կապված չլիներ 1ից 21 հոդվածներով եւ սույն Լրացուցիչ Բաժնի դրույթներով, իրավունք կունենար օգտվել I (1) հոդվածով նշված արտոնություններից, որ կկիրառի I կամ III հոդվածների դրույթները կամ երկուսը միասին այն երկերի նկատմամբ, որոնց մայր երկիրը հանդիսանում է այն երկիրը, որը, համաձայն ներքոհիշյալ (ii) ենթակետի, թույլատրում է այդ հոդվածների կիրառումը այդպիսի երկերի նկատմամբ, կամ, որը կապված է 1ից 21 հոդվածներով եւ սույն Լրացուցիչ Բաժնի դրույթներով. այդպիսի հայտարարությունը II հոդվածին հիմնվելու փոխարեն կարող է հիմնվել V հոդվածին:

ii) որ նա թույլ է տալիս սույն Լրացուցիչ Բաժնի դրույթների կիրառումը երկերի նկատմամբ, որոնց մայր երկիրն է հանդիսանում ինքը, այն երկրների կողմից, որոնք հայտարարություն են արել վերոհիշյալ (i) ենթակետի համաձայն կամ ծանուցում՝ I հոդվածի համաձայն:

2. (I) կետի համաձայն արված ցանկացած հայտարարություն պետք է լինի գրավոր տեսքով եւ ի պահ է հանձնվում Գլխավոր Տնօրենին: Հայտարարությունն ուժի մեջ է մտնում ի պահ հանձնման օրից: